ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ «ԱՐՄԱՆ-ԵՐԵՄ» ՍՊԸ
РА ГЕГАРКУНИКСКАЯ ОБЛАСТЬ ООО "АРМАН-ЕРЕМ"
RA MARZ GEGHARKUNIK LTD "ARMAN-EREM"

ք. Գավառ, Արծվաքար թաղ., հեռ. (093) 19-66-68
г.Гавар. уч. Арцвакар тел., (093) 19-66-68
c.Gavar. si.Artcvacar, tel. (093) 19-66-68

էլ. փոստ gexarquniqnairi@mail.ru

№ 03/19-106

«03» մայիսի 2019թ.

«Գագնախշին» ՍՊԸ-ի տնօրեն՝
պր-ն Գ. Ղազարյանին

«Արման-Երեմ» ՍՊԸ-ն (ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից տրված լիցենզիա ՔՊԼ № 16992) դիտարկելով «ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում» նախահաշվային փաստաթղթերը, երաշխավորում է նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին:

Օբյեկտի շինարարության նախահաշվային արժեքը կազմում է 173843.29 հազար դրամ, ներառյալ ԱԱՀ:

Առդիր՝ եզրակացություն 2 թերթից:

Տնօրեն՝ Յու. Ավետիսյան

«Արման-Երեմ» ՍՊԸ

Համաձայնում եմ՝
«03» մայիսի 2019թ.
Տնօրեն՝
_____ Յու. Ավետիսյան

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ըստ «ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում» նախահաշվային փաստաթղթերի

Պատվիրատու՝ Կապանի քաղաքապետարան

Նախագծող՝ «Գագնախշին» ՍՊԸ

Նախագծման հիմք է ծառայել

ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման նախագիծն իրականացվել է Կապանի համայնքապետարանի պատվերով, պատվեր ՀՀ ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-19/4: Նախագիծն իրականացվել է համաձայն պատվիրատուի կողմից տրված նախագծային և ճարտարապետահատակագծային առաջադրանքների N7, 25.02.2019, հիմք է ընդունվել ՀՀ տարածքում գործող նորմատիվային փաստաթղթերն, ինչպես նաև տանիքների տեխնիկական վիճակի ուսումնասիրությունները և անհրաժեշտ միջոցառումների ցանկը: Կատարվել են համատեղ չափագրական աշխատանքներ, պատվիրատուի ներկայացուցիչների հետ միասին: Լուծումներն և տեխնիկական հարցերը համաձայնեցված են համայնքի ղեկավարության և շահագործող կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Նախագծային աշխատանքներում ընդգրկված շենքերի տանիքներն կարելի է բաժանել երկու մասի՝ լանջավոր տանքիներ և հարթ տանիքներ:

Լանջավոր տանքիների վերանորոգում նախատեսված է Շահումյան 23, Շահումյան 37, Երկաթուղայինների 1, Սպանդարյան 5, Թումանյան 5, Շինարարների 2, Շինարարների 4, Շինարարների 9, Շինարարների 12, Գ. Նժդեհ 18, Մ. Պապյան 26, Հ. Ավետիսյան 30, Հ. Ավետիսյան 34 և Բաղաբերդ թաղամասի 18 հասցեների շենքերում: Նախագծում ընդգրկված լանջավոր տանիքներ ունեցող բոլոր շինությունները քարե կրող պատերով, քառահարկ կամ հինգ հարկանի բազմաբնակարան շենքեր են, շինություններ գտնվում են բավարար տեխնիկական վիճակում: Ընդգրկված բոլոր շենքերի տանիքածածկույթները երկար տարիների շահագործման հետևանքով գտնվում են անբավարար տեխնիկական վիճակում: Բոլոր տանիքներն ունեն կազմակերպված ջրահեռացում, տանիքների ջրահեռացման սխեմաները չեն փոփոխվում: Մաշված և քայքայված վիճակում են թե ասբոհերձաքարային ծածկույթ ունեցող թե մետաղական սև ներկած թիթեղով իրականացված տանիքները, կից տեղադրված են բնորոշ պատկերների նկարները: Նախատեսվում է փոխարինել լանջավոր տանիքների տանիքածածկուքները ցինկապատ պրոֆիլավոր 0.50 մմ հաստության թիթեղով: Ուժեղացվում, փոխարինվում, կամ լրացվում են փայտյա կրող էլեմենտները, ավելացվում են լրացուցիչ մետաղական էլեմենտներ, կապեր, որպիսի ապահովվի փայտյա կոնստրուկցիաների կապն միմիանց և շինությունների հիմնական կրող կոնստրուկցիաների հետ: Փայտյա տախտակամածերն և կավարամածները վերանորոգվում են, ուղղվում, խտացվում: Նախատեսված է իրականացնել ցինկապատ 0.55 մմ հաստության թիթեղվջրհոս ծոռ և ցվիքներ, փոխարինվում են բոլոր ջրահեռացման խողովակները և ծագարները: Փայտյա բոլոր կոնստրուկցիաները մշակվում են հականեխիչ և հակահրդեհային լուծույթներով:

Հարթ տանիքների վերանորոգում նախատեսված է Ռ. Մինասյան 20 շենքի տանիքում և Ձորք թաղամասի 6 շենքի, 2-րդ մուտքի տանիքում: Նախագծում ընդգրկված հարթ տանիքներ ունեցող շենքերն ինն հարկանի կարկասային կամ խոշորապանել շենքեր են: Տանիքների հիդրոմեկուսացումն իրականացված է մի քանի շերտանի ռուբերոիդային ծածկույթով, բոլորն ապահովված են ներքին ջրահեռացման համակարգով: Գտնվում են անբավարար տեխնիկական վիճակում, մաշված են և քայքայված: Նախագծով նախատեսված է քանդել ամբողջությամբ հիդրոմեկուսիչ շերտը, ցեմենտավազե հարթեցնող շերտը: Իրականացնել նոր ցեմենտավազե հարթեցնող շերտ ամրանավորված և համապատասխան թեքություններով: Հիդրոմեկուսացումն իրականացվում է երկուշերտ 4.0 մմ

հաստության իզոգամով, վերինշերտը փայլաթիթեղով: Պարապետերը, օդափոխության հորանները ծածկվում են ցինկապատ թիթեղի օգնությամբ, ցվիքները իրականացվում են նույնպես ցինկապատ թիթեղով 0.55 մմ հաստության: Նախագծային փաստաթղթերով նշված է նաև, որ աշխատանքները իրականացնելու ընթացքում պարտադիր պահպանել շին աշխատանքների կատարման համար անհրաժեշտ անվտանգության կանոնները, տանիքում, բարձրության վրա աշխատանքների ընթացքում օգտագործել անվտանգության պարաններ: Աշխատանքներ չի կարելի իրականացնել մառախլապատ, անձրևոտ կամ ձնոտ եղանակների ընթացքում

Ներկայացված է նախահաշիվ 173843.29 հազ. դրամ:

Վերանորոգման նախահաշվային փաստաթղթերը կազմված են աշխատանքային նախագծի և շինարարական աշխատանքների գործող գների հաշվարկների մեթոդական ցուցումների հիման վրա, որը հաստատված է թիվ 05 առ 03.05.2008թ. հրամանով ՀՀ Քաղաքաշինության Նախարարության կողմից: Նյութերի արժեքները վերցված են թիվ 3 ինֆորմացիոն տեղեկագրից:

Միջին աշխատավարձի չափ - 175 738 դրամ:

Համաձայն վերը նշված դրույթի նախահաշվային արժեքները որոշելիս ընդհանուր գների հիման վրա հաշվի են առնված հետևյալ գործակիցները.

1. Շինարարական նյութերի արժեքին տրված է՝

ա - Տրանսպորտային ծախսերը հաշվի առնող գործակից	- 1.129
բ - Այլ նյութերի չափը հաշվի առնող գործակից	- 1.05
գ - Պահեստային, փաթեթավորման ծախսերը հաշվի առնող գործակից	- 1.02
2. Աշխատավարձի գործակից	- 1623,45
3. Մեքենա - մեխանիզմների շահագործման գործակից	- 2636,56

Դիտարկելով ներկայացված նյութերը «Արման-Երեմ» ՍՊԸ-ն նշում է՝

Նախագծանախահաշվային փաստաթղթերում նկատված թերությունները վերացվել են աշխատանքային կարգով:

Եզրակացություն՝

Երաշխավորվում է «ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում» նախահաշվային փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին:

Կառույցի նախահաշվային արժեքը կազմում է 173843.29 հազ. դրամ, ներառյալ ԱԱՀ:

Գլխավոր մասնագետ՝ Մ. Աղդալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ 16992

(լիցենզիայի համարը)

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՀԱՅԵՐԻ ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻՈՆԱՅԻՆ ՄԱՍԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԳԵՆԵՐԱԼՈՒԹՅԱՆԵՐՈՒՅԼՏԿՈՒԹՅՈՒՆ ՉՊԱՀԱՆՋՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

(գործունեության տեսակը)

Տրված է « 7 ՄԱՐՏԻ 2019թ. » « ԱՐՄԱՆ - ԵՐԵՆ » ՍՊԸ ԳՆՈՒՄ, ԱՐԾՎԱԲԱՐ ԹՄՈՂ

(լիցենզիան տալու ամսաթիվը, իրավաբանական անձի անվանումը ու գտնվելու վայրը
իսկ անհատ ձեռնարկատիրոջ համար ազգանունը, անունն ու բնակության վայրը)

Գործողության ժամկետը՝ **ԱՆԺԱՄԿԵՏ**

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ՝ /

(ստորագրություն)

Կ.Տ.

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ
(անուն, ազգանուն)